

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»  
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԵԳԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝  
Ն.ՄԱՐԿՈՍՅԱՆ  
«13» դեկտեմբերի 2024թ.



**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԵԳԻՏԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Ծրագրի առաջին տարի՝ 2025**  
**Ծրագրի վերջին տարի՝ 2027**  
**Ներածություն**

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների և Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի:

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ: Այն հանդիսանում է Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում է աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները:

Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Բյուրեղավանի համայնքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Ռազմավարական այս ծրագրի հիման վրա մշակվել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

Ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունների նախագծերը քննարկվում են Բյուրեղավան համայնքի ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի անդամների հետ:

Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունները վավերացվում է Բյուրեղավան համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ռազմավարական ծրագիրը հաստատվելուց հետո ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

